

ՀՀ Կառավարություն-ՏԻՄ համաֆինանսավորմամբ ծրագրեր կիրականացվեն Բյուրեղավան համայնքում

26.02.2019

Այսօր Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն աշխատանքային այցով Բյուրեղավան խոշորացված համայնքում էր:

Համայնքում կուտակված խնդիրները բազմաթիվ են, որոնց լուծման համար սրտացավ եւ ամենօրյա աշխատանք է պահանջվում:

Հանրապետության համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացումն առաջիկա տարիներին հանդիսանալու է ՀՀ կառավարության գերակա ուղղություններից մեկը:

Այս համատեքստում Կառավարության համաֆինանսավորմամբ կառուցվելու է «Ա.Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի թվային հետազոտությունների սենյակը և վերանորոգվելու են թվով չորս սանհանգույցները:

Ասֆալտապատվելու են դեպի առաջին թաղամաս տանող ճանապարհը և թաղամասի բակային հատվածները:

Հայրենադարձների թաղամասում ևս կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ, ինչպես նաև կբարելավվի գիշերային լուսավորության ցանցը:

«Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գրավականը համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումն է: Ունենալով նպատակ՝ ՀՀ-ում իրականացնելու տնտեսական հեղափոխություն, շահագրգռված լինելով ներդրումային ակտիվության խթանման աճով՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացումը ենթակառուցվածքներին վերաբերող ծրագրերով դառնում է գերակա ուղղություն», - այցի շրջանակներում ասել է Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը: